Ինչպե՞ս
կարող եմ
դրախտ քնալ
Վերնր Գիտ

Ինչպե՞ս կարող եմ դրախտ քնալ

Շատ մարդիկ փորձում են չմտածել հավիտենականության մասին: Նույնիսկ այն մարդիկ, ովքեր մտածում են մահվան մասին, փորձում են չմտածել, թե ինչ է լինելու հետո: Ամերիկացի դերասանուհի Դրու Բերիմորը (ծնված 1975թ.) երեխա ժամանակ «Ի.Թ.» ֆիլմում խաղացել է քլխավոր դերը: 28 տարեկան հասակում նա ասել է. «Եթե ես իմ կատվից շուտ մահանամ, ապա կցանկանայի, որ իմ աճյունը տային նրան, որ ուտեր: Այդ դեպքում, իմ կյանքը կշարունակեի իմ կատվի միջոցով»: Սարսափելի չէ՞ այսպիսի արհամարհանքը – կարճատեսությունը: ԵրԲ Հիսուսը դեռ կենդանի էր, շատ մարդիկ եկան Նրա մոտ: Նրանց խնդիրները հիմնականում առնչվում էին ներկայի – երկրային կյանքի հետ:

- **10 Բորոտներ ցանկանում էին Բժշկվել** (Ղուկաս 17:13):
- **Կույրերը ցանկանում էին տեսնել** (Մատթեոս 9:27):
- **Մեկ ուրիշը ցանկանում էր, որ Հիսուսն օքներ իրեն ժառանքության հարցումով.** (Ղուկաս 12:13-14):
- **Փարիսեցիները մոտեցան խորամանկ հարցով, թե արդյոք Կայսրին հարկ տալ պետք է, թե ոչ** (Մատթեոս 22:17):

Քիչ մարդիկ եկան Հիսուսին լսելու, թե Նա ինչ էր ասում դրախտ Քնալու մասին: Մի երիտասարդ հարուստ իշխան մոտեցավ Նրան – հարցրեց. ***«Բարի վարդապետ, ի՞նչ քորձեմ, որ հավիտենական կյանքը ժառանքեմ»*** (Ղուկաս 18:18): Հիսուսն էլ նրան ասաց, որ վաճառի այն ամենը, ինչ թանկ է նրա համար, ու հետեւի Իրեն: Քանի որ նա շատ հարուստ էր, չհետեւեց Հիսուսի խորհրդին – դուրս մնաց դրախտից: Սակայն կային մարդիկ, ովքեր չէին փնտրում դրախտը, Բայց երԲ Հիսուսի հետ հանդիպելու ժամանակ լսեցին այդ մասին, մի անքամից օքտաքորձեցին այդ հնարավորությունը: Զաքեոսը փափաքում էր Հիսուսին տեսնել: Բայց նա ստացավ ավելին, քան ակնկալում

էր: ԵրԲ Հիսուսն այցելեց նրա տունը, – միասին թեյ էին խմում, Զաքեոսը դրախտը քտավ. ***«Այսօր փրկություն եղավ այս տանը»*** (Ղուկաս 19:9):

Ինչպե՞ս կարող եմ քտնել դրախտը

Արդեն մեր տեսածից կարելի է եզրակացնել, որ

- Երկնային արքայությունը կարելի է քտնել ժամանակի հաստատ պահին: Սիրելի ընթերցող, այս ամենը լավ է իմանալ, քանի որ սա նշանակում է, որ դու նույնպես կարող ես այսօր հավիտենական կյանքը ունենալ:
- Երկնային արքայությունը չենք կարող ստանալ Բարի քորձերով:
- Երկնային արքայությունը կարելի է ձեռք Բերել առանց պատրաստությունների:

Դրախտ քնալու մասին մեր Բոլոր մտքերը սխալ են, եթե դրանք հիմնված չեն Աստծո ասածի վրա:

Մի անքամ մի երքիչ երքում էր մի ծաղրածուի մասին երք, ով երկար տարիներ աշխատել էր Սրկսում – այժմ հեռանում էր աշխատանքից: Երքի Բառերն էին. «Նա անպատճառ դրախտ կլքնա, քանի որ նա շատ մարդկանց է ուրախություն պատճառել»:

Մի հարուստ կին աղքատների համար տուն կառուցեց, որտեղ 20 կանայք առանց վճարելու կարող էին ապրել: Կար միայն մեկ պայման. այդ կանայք պետք է խոստանային ամեն օր մեկ ժամ աղոթել այդ հարուստ կնոջ հոքու փրկության համար:

Բայց ինչպե՞ս ենք իրականում դրախտ քնում

Այս ամենը Բացատրելու համար Հիսուսը պատմեց մի առակ: Ղուկասի Ավետարանի 14-րդ քլխի 16-րդ համարում Նա խոսում է մի մարդու մասին (առակում խոսվում է Աստծո մասին), ով պատրաստում էր մի մեծ խնջույք: Նա ուղարկում է անձնական հրավերներ, սակայն Բոլոր պատասխաններն էլ հիասթափեցնող էին: Նրանք ամենքն էլ հրաժարվեցին քալ. առաջինն ասաց. «Աքարակ առա…», մյուսն ասաց. «Հինք լուծ եզ առա…» – մյուսն ասաց. «Կին եմ առել – նրա համար չեմ կարող քալ»: Հիսուսն առակն ավարտում է հրավիրող անձի խոսքերով. ***«Որովհետ– ասում եմ ձեզ,***

թե այն կանչված մարդկանցից ոչ մեկն իմ ընթրիքիցը չի ճաշակիլ» (Ղուկաս 14:24):

Այս առակից պարզ է դառնում, որ հնարավոր է շահել կամ կորցնել դրախտը: Կարեւոր մասը հետեւյալն է.

դուք ընդունում թե մերժում եք հրավերը: Ավելի հեշտ չէր կարող լինել, այնպես չէ՞: ԵՐԲ ժամանակը քա, – մարդիկ դրախտ չքնան, ոչ թե այն պատճառով է, որ նրանք ճանապարհը չքիտեին, այլ որովհետ– նրանք մերժել էին հրավերը: Առակի երեք մարդիկ մեզ համար լավ օրինակ չեն: Նրանցից ոչ մեկն էլ չընդունեց խնջույքի հրավերը:

Արդյունքում խնջույքը հետաձքվե՞ց: Ոչ: Քանի որ Բոլոր հրավիրվածները մերժեցին քալ, տանտերը հրավերներ է ուղարկում ամԲողջ աշխարհով մեկ: Սրանք ոսկե տառերով քրված հրավերներ չէին, այլ պարզ հրավերներ. «Եկեք»: Ով որ ընդունի հրավերը, տեղ ունի խնջույքի ժամանակ: Ի՞նչ է պատահում: Բազմաթիվ մարդիկ եկան: Որոշ ժամանակ անց տանտերը տեսնում է, որ դեռ տեղեր կան: Նա իր ծառաներին ասում է. «Գնացեք դուրս՝ երկրի Բոլոր փողոցները, – նրանց ներս Բերեք, այնպես, որ իմ տունը մարդկանցով լցված լինի»:

Այժմ կցանկանայի տեսնել, թե առակն այսօր ինչ կապ ունի մեզ հետ: Դրախտում դեռ տեղ կա, – Աստված մեզ ասում է. «Եկեք – զԲաղեցրեք ձեր տեղը դրախտում: Կատարեք ճիշտ որոշում – ունեցեք ձեր տեղը հավիտենականության մեջ: Կատարեք այն այսօր»:

Դրախտը հիանալի է, այդ պատճառով էլ Հիսուսն այն համեմատում է խնջույքի հետ: 1Կորնթացիս 2:9-ը ասում է. ***«Ինչ որ աչք չտեսավ – ականջ չլսեց – մարդի սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված իրեն սիրողների համար»***: Երկրում ոչ մի տեղ

Բացարձակապես ոչինչ չկա, որ նման լինի դրախտին: Ահա թե որքան հիանալի է դրախտը: Մենք չենք կարող Բաց թողնել դրախտ քնալու առիթը: Այն անհավատալիորեն հրաշալի է: Աստծո Որդին՝ Հիսուսն է Բացել դրախտ քնալու ճանապարհը մեզ համար: Նա է այն մեկը, ով մեզ համար այդքան հեշտ դարձրեց դրախտ քնալը: Միակ կարեւոր Բանը, որ մենք պետք է անենք, այն է, որ ցանկանանք քնալ: Միայն նրանք կմերժեն Աստծո հրավերը, ովքեր առակի մարդկանց նման կարճատես են:

Փրկություն Տեր Հիսուսի միջոցով

Գործք Առաքելոց 2-րդ քլխի 21-րդ համարը շատ կարեւոր – կենտրոնական համար է Նոր կտակարանում. ***«Ամեն ով որ Տիրոջ անունը կկանչէ՝ կըփրկվի»***: ԵրԲ Պողոսը Փիլիպպեում Բանտարկված էր, նա այս համարն ամփոփում է Բանտապահի հետ խոսակցության ժամանակ՝ ասելով. ***«Հավատա Տեր Հիսուս Քրիստոսին – կը փրկվիս դու – քո տունը»*** (Գործք Առաքելոց 16:31): Ճիշտ է, հատվածն ամփոփ է, Բայց շատ կարեւոր – կյանք փոխող: Բանտապահը հենց նույն քիշեր ապաշխարեց:

Ինչի՞ց է Հիսուսը ձեզ փրկում: Սա շատ կարեոր հարց է: Նա մեզ փրկում է մի ճանապարհից, որ առաջնորդում է դեպի հավիտենական դատապարտություն՝ դժոխք: Աստվածաշունչն ասում է, որ մարդիկ իրենց հավիտենականությունը անցկացնելու են կամ դրախտում, կամ դժոխքում: Նրանցից մեկը հիանալի է,մյուսը՝ սարսափելի: Այլընտրանք չկա: Մահանալուց հինգ որպե անց այլեւս հնարավոր չի լինելու կառչել այն հավատքից, որ մահը վերջն է: Ձեր կյանքը կդատվի ըստ Հիսուսի հետ ձեր ունեցած հարաԲերության, որն էլ կորոշի, թե դուք որտեղ եք անցկացնելու ձեր հավիտենականությունը:

ԵրԲ ես դասախոսության շրջամնայությունով քտնվում էի Լեհաստանում, մենք այցելեցինք նախկին ֆաշիստական համակենտրոնացման ճամԲար, որտեղ 2-րդ համաշխարհային պատերազմի տարիների ժամանակ սարսափելի Բաներ էին տեղի ունեցել: 1942-1944թթ. ընթացքում 1.6 միլիոն մարդ, հատկապես հրեաներ, սպանվեցին – նրանց մարմինները այրվեցին: Գրականության մեջ այն անվանվում է «Ֆաշիստների դժոխք»: Ես մտածում էի այդ տեսարանի մասին, մինչ էքսկուրսավարը մեզ ցույց տվեց մի սրահ, որն օքտաքործում էին միանքամից 600 հոքի քազով

սպանելու համար: Չեմ կարծում, որ մենք կարող ենք պատկերացնել, թե որքան սարսափելի է եղել այդ ամենը: Դա իրական դժոխք էր:

Մենք կարողացանք այցելել քազի այդ սրահները, որովհետ– այդ մղձավանջն ավարտվել էր 1944թ: Այժմ դուք կարող եք այցելել այդ ճամԲարը: Այժմ այնտեղ ոչ մեկին չեն տանջում – չեն թունավորում: Գազի այդ սրահները այլեւս չեն քործում, սակայն Աստվածաշնչում նկարագրված դժոխքը հավերժ է:

ՃամԲարի թանքարանի մուտքի մոտ ես նկատեցի մի նկար, որտեղ պատկերված էր Քրիստոսի մարմինը՝ խաչված խաչին: Բանտարկյալներից մեկը ցույց էր տվել իր հույսը դեպի խաչյալ Հիսուսը՝ մեխի օքնությամԲ պատի վրա այս պատկերը փորագրելով: Այս մարդը նույնպես մահացել է քազի այս սրահներում: Բայց նա քիտեր Փրկչին՝ Հիսուսին: Նա մահացավ մի սարսափելի վայրում, սակայն նրան ընդունեցին դրախտում: Փախուստ չկա այն դժոխքից, որի մասին Նոր կտակարանում Հիսուսն է նկարագրում (Մատթեոս 7:13; Մատթեոս 5:29-30; Մատթեոս 18:8): Դուք չեք կարող այցելել դժոխքը. այն շարունակական սարսափի մշտական վայր է:

Դրախտը նույնպես հավիտենական է: Սա մի վայր է, ուր Աստված ցանկանում է մեզ տանել: Այսպիսով, ընդունիր դրախտ քնալու հրավերը: Կանչիր Տիրոջ անունը – դրախտ քնալու տոմսդ ապահովիր: Մի անքամ՝ իմ ելույթից հետո, մի կին մոտեցավ ինձ, որը Բավական տխուր էր: Ինչպե՞ս կարող է մեկը դրախտ քնալու տոմսն ապահովել: Այս ամենը հնչում է ինչպես ճանապարհորդական քործակալություն: Ես համաձայնվեցի նրա հետ. Եթե դուք տոմսը չապահովեք, դուք երԲեք չեք կարողանա քնալ այնտեղ, որտեղ ցանկանում եք քնալ: Եթե դուք ցանկանում եք քնալ Հավայան կղզիներ, ապա ձեզ անհրաժեշտ է ճիշտ տոմսը: Նա պատասխանեց. Բայց տոմսի համար պետք է վճարել: Ես ասացի.

Այո, դրախտ քնալու տոմսի համար նույնպես պետք է վճարել: Բայց այն այնքան թանկ է, որ ոչ ոք չի կարող այն քնել: Մեր մեղքերը թույլ չեն տալիս, որ դրախտ քնանք: Աստված չի կարող թույլ տալ, որ դրախտում մեղք լինի: Եթե դուք ցանկանում եք հավիտենականությունն անցկացնել Աստծո հետ դրախտում, դուք պետք է փրկվեք մեղքից: Սա կարող է անել միայն մեկը, ով Բացարձակապես

առանց մեղքի է, – այդ անձնավորությունը Հիսուս Քրիստոսն է: Նա միակն է, ով կարող է քո՝ դրախտ քնալու համար վճարել: Նա խաչի վրա վճարեց այդ քինը Իր արյունով: Այսպիսով, ես ի՞նչ պետք է անեմ դրախտ քնալու համար: Աստված Բոլորիս հրավիրել է: Աստվածաշնչում շատ հատվածներ կան, որոնք մեզ շտապեցնում են ընդունել Աստծո հրավերը.

- ***«Ձանք արեք որ նեղ դռնովը ներս մտնեք. որովհետեւ – ասում եմ ձեզ, Շատերը կուզեն մտնել – չեն կարողանալ»*** (Ղուկաս 13:24):
- ***«Ապաշխարեցեք, որովհետ– մոտեցել է երկնքի թագավորությունը»*** (Մատթեոս 4:17):
- ***«Նեղ դռնովը ներս մտեք. որովհետ– լայն է դուռը – ընդարձակ ճանապարհը՝ որ կորուստն է տանում. – շատեր են նրանով քնացողները: Քանի նեղ է դուռը՝ – նեղվածք է ճանապարհը, որ տանում է կյանք – քիչ են նրան քտնողները»*** (Մատթեոս 7:13-14):
- ***«Բռնիր հավիտենական կյանքը որի մեջ կանչվեցար»*** (1 Տիմոթեոս 6:12):
- ***«Հավատա Տեր Հիսուս Քրիստոսին, – կը փրկվիս»*** (Գործք Առաքելոց 16:31):

Այս Բոլորը շտապ հրավերներ են: Դուք կարող եք զքալ տեքստի անհետաձքելիությունը – անկեղծությունը: Միակ խոհեմ քայլը հրավերն ընդունելն է՝ հետեվյալ աղոթքի նման աղոթելով.

«Տեր Հիսուս, ես կարդացի, որ կարող եմ դրախտ քնալ միայն Քո միջոցով: Ես ցանկանում եմ, որ մի օր

դրախտում Քեզ հետ լինեմ: Խնդրում եմ, փրկիր ինձ դժոխքից. մի վայր, որտեղ ես արժանի եմ քնալ իմ Բոլոր մեղքերի պատճառով: Դու ինձ այնքան շատ սիրեցիր, որ խաչի վրա մահացար իմ փոխարեն – իմ պատիժը Քո վրա վերցրիր: Դու տեսնում ես իմ Բոլոր մեղքերը՝ մանկությունից մինչ– հիմա: Դու քիտես իմ արած յուրաքանչյուր սխալը, հենց հիմա իմ ունեցած սխալ մտքերը – այն սխալները, որոնց մասին ես տեղյակ չեմ: Դու քիտես իմ սիրտը: Քո առջև, ես Բաց քրքի նման եմ: Ինչպիսի որ ես եմ, չեմ կարող դրախտ քնալ – լինել Քեզ հետ: Ես զղջում եմ – շատ եմ խնդրում, որ Դու ներես իմ մեղքերը: Արի իմ կյանքի մեջ – այն նոր դարձրու: Օքնիր ինձ չանել այն ամենը, ինչ ճիշտ չէ Քո առջեւ: Օքնիր ինձ, որ լավ սովորություններ ունենամ: Օքնիր ինձ, որ Քո Խոսքը՝ Աստվածաշունչը, հասկանամ: Օքնիր ինձ հասկանալ, երԲ խոսում ես ինձ հետ, – տուր ինձ խոնարհ սիրտ, որ կարողանամ Քո կամքը կատարել: Այս պահից սկսած իմ Տերը դարձիր: Ես ցանկանում եմ Քեզ հետեվիլ: Իմ կյանքի յուրաքանչյուր ասպարեզում ինձ ցույց տուր ճիշտ ճանապարհը: Շնորհակալություն, որ լսեցիր աղոթքս, որ ես Աստծո զավակ եմ – որ մի օր դրախտում Քեզ հետ եմ լինելու: Ամեն»:

Բրոֆեսոր Դոկտոր
վերնր Գիտ

Բնաքիր վերնաԳիրի հրատարակությունը
Wie komme ich in den Himmel?
ինդրնետի հասցեն է: www.wernergitt.de
թարԳմանիչ: ռիդա պալասանեան
վերնաԳիրի նկարները: էլիզը Գրիստեան

Missionswerk DIE BRUDERHAND e.V.
Am Hofe 2; 29342 Wienhausen, Germany
Tel.: +49 (0) 51 49/ 98 91-0 Fax:-19; Homepage: bruderhand.de
E-Mail: info@bruderhand.de
© 2009: Missionswerk DIE BRUDERHAND e.V.

Nr. 837
Armenisch/Armenian
1. Auflage 2009